| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|---|
| 19 | Մարտ | 2019 թ. | | | Ա | 7693068945 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ | Ճշգրտվող հաշվի | |
| 18 | Մարտ | 2019 թ. | | | Սերիա | Համար |
| | | | | | | |
| | | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | | | | | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | [7] | |
|---|---|---|---|---|
| | | | [8] | |
| | | | [9] | |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Հաշիվ՝ 3225, Փորձագետ՝ Ա. Օրդյան

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 5 6 3 5 4 |
| [12] Անվանումը | «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 5 6 3 5 4 / 1 |
| [14] Բանկային տվյալները | Երևանի թիվ 1 ՏԳԲ — N 900018003724 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Սարմենի 1 |
| [16] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [18] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [19] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն — N 900011000834 |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [21] Լրացուցիչ տվյալներ | |

| [22] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ծառայության2 քանակը) | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Քրեական գործ N11154419-ի անվտանգության փորձաքննություն | հատ | 1 | 81666.666 | 81666.67 | 20 | 16333.33 | 98000 |
| Ընդամենը | | | | | 81666.67 | X | 16333.33 | 98000 |

Դուրս գրող՝ MURADYAN RUZAN 7810930060
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

19/03/2019 11:20:04

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին

4 փետրվարի 2019թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ՝ Ա.Ա. Խաչատրյանս վերանայելով վարույթիս թիվ 11154419 քրեական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ. դեկտեմբերի 18-ին, ժամը 08:40-ի սահմաններում, Աննա Սարգսի Ղարիբյանը գտնվելով Երևանի Արշակունյաց պողոտայի 127/2 հասցեում գտնվող շենքի առաջին հարկում, սեղմել է վերելակի կանչի կոճակը, որից հետո տեսնելով, որ ցուցատախտակին գրվել է «1» թվանշանը, քաշելով բացել է վերելակի դուռը և փորձել մտնել ներս՝ վերելակի խցիկ, սակայն չնկատելով, որ վերելակը տեղում չէ, ընկել է վերելակի հորանի մեջ և ստացել ծանր մարմնական վնասվածք առողջության տևական քայքայումով:

17.01.2019թ. ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացվել է դժբախտ դեպքի տեխնիկական քննության եզրակացությունը, համաձայն որի վերոգրյալ հասցեում գտնվող վերելակը գրանցված չէ ՀՀ ԱԻՆ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեստրում և չի ենթարկվել տեխնիկական անվտանգության փորձաքննության:

Փաստի առթիվ 17.01.2019թ. ոստիկանության Շենգավիթի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 157 հոդվածի 1-ին մասով որոշում է կայացվել թիվ 11154419 քրեական գործը հարուցելու և նախաքննության ուղարկելու մասին:

Քրեական գործը ստացվել է Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժին և բաժնի պետի տեղակալի կողմից հետագա նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

Որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Նախաքննության ընթացքում ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ից տեղեկություն է ստացվել այն մասին, որ դեռևս նյութերի նախապատրաստման ընթացքում դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին որոշման պահանջները չեն կարող կատարվել, քանի որ ՀՀ ԱԻՆ և ՀՀ ոստիկանությունը չունեն համապատասխան պայմանագիր վավերացրած, ուստի որոշման կատարումը թողնվել է անհետևանք:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել պարզել աշխատանքի կանոնների և տեխնիկայի անվտանգության կանոնների խախտումներ տեղի ունեցել են, թե ոչ, որի համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-244 հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Թիվ 11154419 քրեական գործով նշանակել դատատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետներին:

2.Անհրաժեշտության դեպքում փորձագետին տրամադրել թիվ 11154419 քրեական գործի նյութերը:

3.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել ներքոհիշյալ հարցերը.

- նշված հասցեում տեղադրված վերելակը ինչ բեռնատարողության է, նախատեսված է արդյոք մարդկանց տեղափոխելու համար, թե ոչ:
- վերելակի տեղադրումը իրականացվել է համապատասխան թույլտվության հիման վրա, թե ոչ, եթե այո, ապա ենթարկվել է ամենամյա փորձաքննություն և ինչպիսի եզրակացություն է տրվել:
- ինչի պատճառով է վերելակի դռները բացվել, երբ այն դեռևս գտնվել է ընթացքի մեջ:
- տեխնիկայի անվտանգության կանոնների կամ շահագործման կանոնների խախտումներ տեղի ունեցել են, թե ոչ, եթե այո, ապա ով կամ ովքեր են պատասխանատու այդ խախտումների համար:
- Ա.Ղարիբյանի մարմնական վնասվածքներ ստանալու հանգամանքը պատճառահետևանքային կապի մեջ է տեխնիկայի անվտանգության կանոնների խախտումների հետ, թե ոչ, եթե այո, ապա ինչումն է արտահայտվել պատասխանատու անձի կողմից թույլ տրված խախտումները:

4.Փորձագետը կարող է պատասխանել նաև այն հարցերին, որոնք որոշման մեջ նշված չեն, սակայն նշանակություն ունեն գործի համար և պարզվել են փորձաքննություն կատարելու ժամանակ:

5.Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով սահմանված պատասխանատվության մասին:

*ՀԿԳ քննիչ՝* *Ա.Ա. Խաչատրյան*